# ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔ-ՁԵՎԱՉԱՓ

ՄԱՍ 1

Լրացված է՝ հիմք ընդունելով Ծրագրի նպատակը, խնդիրները՝ օգտվելով համապատասխան լիազոր մարմինների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, շրջակա միջավայրի նախարարությունների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի, ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներից, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի և համայնքի պաշտոնական կայքերից, Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) տվյալներից, Տարածքային զարգացման հիմնադրամի կայքից, «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ի կողմից փոքր ՀԷԿ-երի և հանքարդյունաբերական ընկերությունների ոլորտներում կատարված ուսումնասիրությունների տվյալների բազայից, պաշտոնական այլ փաստաթղթերից և ստորագրված պայմանագրերից:

**Ընդհանուր տվյալներ համայնքի մասին**

**Մարզ- Գեղարքունիք**

**Համայնք- Վարդենիս**

Վարդենիս համայնքն իր մեջ ընդգրկում է՝ Վարդենիս քաղաքը, Ազատ, Ախպրաձոր, Ակունք, Այրք, Ավազան, Արեգունի, Արփունք. Գեղամաբակ, Գեղամասար. Գեղաքար, Դարանակ, Զառիվեր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կախակն, Կարճաղբյուր, Կութ, Կուտական, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Ներքին Շորժա, Նորաբակ, Նորակերտ, Շատջրեք, Շատվան. Ջաղացաձոր, Սոտք, Վաննաև, Վերին Շորժա, Տորֆավան, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ գյուղերը:

Համայնքի ղեկավար---…… հեռախոս **……**

Էլ. փոստ-

**Հասցեն՝** ք. Վարդենիս…….

համայնքի էլեկտրոնային կայք ,,,,,,,,,

Համայնքի ավագանու անդամներ՝ Արամ Մելքոնյան, Արտակ Մանուկյան, Մելանյա Եփրեմյան, Մուշեղ Շաբոյան, Կարեն Սիմոնյան, Նաիրա Մանուչարյան, Հայկ Երանոսյան, Ռաֆայել Խչեյան, Ռոմելյա Սարգսյան, Զավեն Շհոյան, Համլետ Բազոյան, Արմինե Աղաջանյան, Սեւակ Սիմոնյան, Ահարոն Խաչատրյան, Կարեն Մկրտչյան, Սաթենիկ Մինասյան, Աշոտ Խաչատրյան, Արման Մաթեւոսյան, Նելլի Խաչատրյան, Աշոտ Գրիգորյան, Վարուժան Ավետիսյան, Արուսյակ Ավետիսյան, Սպարտակ Հովհաննիսյան, Վարդան Մարգարյան, Արաքսյա Հայրապետյան, Դավիթ Շահնազարյան. Ջեմմա Վարդանյան:

**Համայնքի սոցիալական, տարիքային, գենդերային պրոֆիլ**

Վարդենիս խոշորացված համայնքի բնակչության ընդհանուր թիվը ըստ նրա կազմում ներառված նախկին համայնքների 2018 թվականի անձնագրերի http://gegharkunik.mtad.am/about-communities/ կազմում է 40717 մարդ, որից կին՝ 42%, տղամարդիկ՝ 58%: Նպաստառու ընտանիքների թիվը՝ 2379, կենսաթոշակառուների թիվը՝ 3068 հոգի:

Բնակչության հիմնական զբաղմունքմունքն է դաշտավարությունը՝կարտոֆիլի, կաղամբի, աշնանացան ցորենի, գարու և խոտի արտադրությամբ, անասնապահությունը, թռչնապահությունը, համայնքային մարմիններում համայնքային և քաղաքացիական ու պետական ծառայությունը, մանր բիզնեսում զբաղվածությունը Սոտքի ոսկու հանքավայրում աշխատանքը:

Համայնքի վարչական տարածքը՝ 101280,184 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողերինը՝ 80087,9 հա:

Նախկին Գեղամասար համայնքի ընդերքօգտագործման նշանակության հողերի վարձակալության դիմաց ստացված տեղական բյուջեի մուտքերը կազմում են 68,0 մլն. դրամ:

Համայնքի տարածքում առկա են բազմաթիվ պատմամշակութային հուշարձաններ, մասնավորապես՝ Ծովակ բնակավայրում է գտնվում ՝ 11-րդ դարի Սբ. Աստվածածին եկեղեցին, բազմաթիվ խաչքարեր, որոնցից 7-ը մի շարքի վրա են և կոչվում են Յոթ Եղբայր: Գյուղից 1,5 կմ հյուսիս-արևելք է գտնվում միջնադարյան Ավերք գյուղատեղին, արևմտյան մասում՝ Թուխ Մանուկ մատուռը: Գյուղի շրջակայքում կան մ.թ.ա 1-ին հազարամյակի կիկլոպյան ամրոց-բնակավայրը, մ.թ.ա. 8-րդ դարի Սարդուրի 2-րդի սեպագիր արձանագրությունը: Կարճաղբյուր գյուղում՝ ժայռապատկերներ, կիկլոպյան ամրոց, միջնադարյան մատուռներ, խաչքարեր: Մեծ Մասրիկ գյուղում կառուցված նոր եկեղեցին, գյուղում է գտնվում 8-րդ դարի հանրաճանաչ խաչքարը, 10-12-րդ դարերի եկեղեցու ավերակները, գերեզմանատներ, Մելիք Շահնազարյանների տոհմային գերեզմանատունը, հեթանոսական շրջանի դամբարանադաշտեր, նոր ժամանակների հուշարձաններ: Մաքենիս գյուղում պահպանվել է 9-րդ դարի կառուցված Մաքենյաց վանքը ,10-13 դարերում կառուցված եկեղեցին , պահպանվում է 10-17 դարերում գերեզմանոց խաչքարերով : Ախպրաձոր գյուղից 2 կմ հեռավորության վրա կա 16-18-րդ դդ Ուղեռ, իսկ հյուսիսային մասում՝ Հին Ախպրաձոր (10_20_րդ դդ.) և Կարմիրշեն (17_18_րդ դդ.) գյուղատեղիններ: Ունի16-18-րդ դդ. Եկեղոցի և Տիկնա (18-րդ դ.) մատուռը:

**Համայնքի սոցիալական և բնապահպանական բացահայտված խնդիրներն՝ ըստ համայնքի անձնագրի և սոցիալ-տնտեսական զարգացման վերջին գործող ծրագրի**

- **Աղքատության ցուցանիշը 6 %.:** Համայնքում առկա է սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակ: Ըստ Վիճակագրակայն կոմիտեի 2019թ-ի «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ուսումնասիրության, Գեղարքունիքում 2018թ-ին աղքատությունը 5.9% է եղել:
- **Բնակչության զբաղվածության ցուցանիշը՝** շատ ցածր է:
- **Ոռոգման և խմելու ջրերի հասանելիությունը**

  Համայնքի ոչ բոլոր գյուղերն են ապահովված ոռոգման ցանցով, որի պատճառով համայնքի բնակիչները հողօգտագործումից մեծ եկամուտներ չեն ստանում: Համայնքի մի շարք գյուղերում խմելու և ոռոգման ջրի ջրամատակարարման ոչ բավարար մակարդակը համայնքի թույլ կողմերից է, մասնավորապես՝ Մեծ Մասրիկ համայնքի հողերի 80%-ն անջրդի է:

- **Առողջապահական սպասարկման հաստատությունների առկայությունը** Ըստ https://nih.am/assets/pdf/atvk/d1470d9566da27ed84427200eeff2945.pdf կայքի համայնքի տարածքում գործում են՝ «Վարդենիսի հիվանդանոց» ՊՓԲԸ-ն, Վարդենիսի պոլիկլինիկան ՊՓԲԸ-ն, Ծովակի. Գեղամասարի /շենքը գտնվում է բարվոք վիճակում, սակայն ունի արդիական բժշկական սարքերով համալրման կարիք/, Կարճաղբյուրի, Մեծ Մասրիկի, Ակունքի,Լուսակունքի բժշկական ամբուլատորիաները, «Վարդենիսի ստամոտոլոգիական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն, առողջության առաջնային պահպանման կենտրոններ են գործում ոչ բոլոր գյուղական վայրերում:
  Վարդենիսում տեղակայված է նաև զինվորական հոսպիտալը, որը նույնպես ազգաբնակչությանը որոշ հիվանդանոցային ծառայություններ է մատուցում:
- **Կրթության հասանելիություն (նախադպրոցական, դպրոցական, արհեստագործական, բարձրագույն ուսումնական հաստատություններ)**
  Համայնքում գործում է 32 հանրակրթական դպրոց և 16 նախադպրոցական հաստատություններ, որոնցից մի քանիսը չեն գործում:
- **Աղբահանություն**
  Վարդենիս քաղաքում կա աղբավայր, որտեղ հավաքվում է նաև շրջակա մի քանի բնակավայրերի կենցաղային աղբը, իսկ մնացած բնակավայրերում աղբահանությունը կատարվում է բնակիչների կողմից, ըստ իրենց հայեցողության և հարմարության: Բնակավայրերում չկան աղբամաններ, չի իրականացվում կանոնավեր աղբահանություն:

**Համայնքի ուժեղ կողմերն են՝**

Զարգացման համար համայնքն ունի բավարար մասնագիտական ներուժ, համայնքը գտնվում է բավարար աշխարհագրական դիրքում, հիմնական բնակավայրերի էկոլոգիապես մաքուր վիճակն ու Սևանա լճի հարևանությունը հնարավորություն են տալիս այն դարձնելու հանգստի և զբոսաշրջային գոտի, Սոտքի հանքավայրում, փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը, գյուղատնտեսության համար առկա են բավարար հողային և ջրային պաշարներ, անասնապահության զարգացման հեռանկարներ՝ պայմանավորված մեծ մակերեսով արոտավայրերի և ալպիան գոտու առկայությամբ:

**Համայնքի թույլ կողմերն են՝**

Գործազրկության առկայությունը և արտագնա աշխատանքի մեկնողների մեծ քանակը, աշխատատեղերի պակասը, երաշտների և կարկտահարության հետևանքով գյուղացիների եկամուտների նվազումը, որոշ բնակավայրերում ոռոգման և խմելու ջրի պակասը դրանց համակարգերի վթարային վիճակը: Համայնքում սոցիալապես խոցելի ընտանիքների մեծ քանակը, ներհամայնքային ճանապարհների, փողոցների անբավարար վիճակը, աղբահանության կազմակերպման ցածր մակարդակը գիշերային լուսավորության ցանցի բացակայությունը, անջրդի հողերի ջրարբիացման և արոտավայրերի վերականգնման հիմնախնդիրը, աղբամանների և աղբահան մեքենաների բացակայությունը: Գյուղամերձ արոտների մակերեսների անհամապատասխանությունն առկա անասնագլխաքանակին, հեռագնա արոտներում անասնապահական մթերքների արտադրանքի ինքնարժեքի բարձր ցուցանիշ, ինչը թույլ չի տալիս ոլորտի զարգացմանը: Համայնքում գյուղատնտեսական ապրանքների մեծածախ շուկաների բացակայությունը, ինչը խոչընդոտում է ոլորտի զարգացմանը և ապրանքաշրջանառության խթանմանը: Դպրոցների, նախադպրոցական հաստատությունների, հասարակական հիմնական շենքերի անմխիթար վիճակը, համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող՝ փոքր հիդրոէլեկտրակայաններ, մետաղական և ոչ-մետաղական հանքավայրեր, նախատեսվող

արևային էներգիայի կայաններ շահագործող կազմակերպությունների ֆինանսական միջոցներից օգտվելու անբավարար ջանքերը:

**Համայնքի վարչական տարածքում մետաղական հանքավայրեր շահագործող կամ վերամշակող կազմակերպություններ** (կազմակերպություն, արդյունահանվող կամ վերամշակվող հանքաքար)՝

1. Համայնքի տարածքում գործունեություն իրականացնող «ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ» ՍՊԸ-ն զբաղվում է Սոթքի ոսկու հանքավայրի շահագործմամբ (հանքավայրի տեղամասի մակերեսը՝ 224,0 հա), արդյունահանված հանքաքարից ՀՀ Արարատի մարզում գտնվող ոսկու կորզման գործարանում արտադրվում է արծաթ և ոսկի պարունակող Դորե ձուլակտորներ:

**Համայնքի վարչական տարածքում ոչ-մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպություններն են՝**

1. «Գեգամետ պլյուս» ՓԲԸ , ՇԱԹՎ-29/159, 2012թ. Շորժայի դունիտների և մագնեզիալ-սիլիկատային ապարներ, հանքի մակերեսը՝ 12,5 հա, տարեկան արդյունահանումը՝ 322000,0 տոննա;
2, «Կապավոր» ՍՊԸ, ՇԱԹՎ 29/207, 2012թ., Ծովակի ավազ և մանրագլաքար, հանքի մակերեսը՝ 15,57հա, տարեկան արդյունահանումը՝ 40000,0 մ$^3$:
3. «Ագրոսպասարկում» ԱՄ-ի Վարդենիսի շրջանային միավորում ԲԲԸ, ՇԱԹՎ-29/255, 2012թ. Ծովակի պեմզային ավազներ/հյուսիսային տեղ/, հանքի մակերեսը՝ 3,7 հա, տարեկան արդյունահանումը՝ 35168,0 մ$^3$:
4. «Վարդենիսի տորֆ» ԲԲԸ., Մասրիկի տորֆ/Գիլի-1 տեղ. / ԲԲԸ, ՇԱԹՎ–29/404. 2012թ, հանքի մակերեսը՝ 17,375 հա, տարեկան արդյունահանումը՝ 11134 տոննա:-
5 «Գեգամետ պլյուս» ՓԲԸ, ՇԱԹՎ-29/525, Շորժայի տրակտոլիտ-պերիդոտիտային ապարների հանքավայր. հանքի մակերեսը՝ 2,65 հա, տարեկան արդյունահանվող պաշարը՝ 50.0 հազ. տ:
6. «Վարդենիսի քարհանք վարչություն» ԲԲԸ, ՇԱԹ-29/643, 2021թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Սուբաթանի տուֆի հանքավայր, մակերեսը՝ 2,04 հա., 1620,1 մ$^3$ տուֆ:

**Վարդենիս համայնքի տարածքում գործունեություն իրականացնող հիդրոէլեկտրակայաններն են՝**

| ՓՀԷԿ-ի անվանումը | Շահագործող Ընկերությունը | Գետը կամ ջրաղբյուրը | Բնակավայրը | Հզորությունը, կՎտ | Էլեկտրական էներգիայի միջին տարեկան օգտակար առաքումը,մլն.կվտժ | 2019 թ. | | 2020թ մինչև օգոստոս ամիսը առաքված էլեկտր. քանակությունը, կվտժ՝ աղբյուր .https://setcenter.am/uploads/pages/6/b7 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Արտադրված էլեկտրաէներգիայի ապրանքային արժեքը, հազ.դրամ | Առաքված էլեկտր. քանակությունը, կվտժ | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Դարանակ» փոքր ՀԷԿ | «Ագրոսպասարկում ԱՄ-ի Վարդենիսի շրջանային միավորում» | Դարանակ | Դարանակ | | | 11471,8 | 479,2 | 0 |
| «Այրք ՓՀԷԿ-1» | «Լուսակունք» ՍՊԸ | Մասրիկ գետի Այրք Վտակ | Այրք | 628 | 0,8 | 30803,7 | 1070,0 | 815.099 |
| «Այրք ՓՀԷԿ-2» | «Լուսակունք» ՍՊԸ | Մասրիկ գետի Այրք Վտակ | Այրք | 659 | 1,4 | 38940,4 | 1553,0 | 778.946 |
| «Ծովակ» ՓՀԷԿ | «Արմարսոն-էներջի» ՍՊԸ | Լճավան աղբյուրներից սնվող ոռոգման համակարգ | Ծովակ | 230 | 1,0 | 16497 | 1029,5 | 500.474 |

**2021 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրված լիցենզիաների համաձայն վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի վարչական տարածքում կառուցվող արևային կայաններն ըստ կարգավորվող ընկերությունների հետևյալներն են՝**

1. «ԷՖԱրՎի Մասրիկ» ՓԲԸ.լիցենզիայի համարը՝ 623, կառուցման ժամնակահատվածը՝ 25.10.2018 01.07.2022, , Էլ. էներգ. արտադ. Ժամանակահատված /ավարտ՝ 16.10.2040 1/20, կայանի անվանումը՝ Մասրիկ-1. հզորությունը՝55 000,0 կվտ, տարեկան արտադրանքը՝ 147,45 մին. կվտժամ , ներդրումների ծավալը՝ 27 345,5 մին. դրամ, Գեղարքունիք՝ Մեծ Մասրիկ Վարդենիս:
2. «ՊՐՈՄ ՍԱՆ» ՍՊԸ, լիցենզիայի համարը՝ 629 կառուցման ժամնակահատվածը՝ 01.12.2018 01.08, Էլ. էներգ. արտադ. Ժամանակահատված /ավարտ՝.2022 01.12.2040 ,կ այանի անվանումը Պրոմ Սինթեզ, հզորությունը՝ 5 000,0կվտ, տարեկան արտադրանքը՝ 8,60 մլն.կվտժամ, ներդրումների ծաբալը՝ 1 536,0 մլն. դրամ, Գեղարքունիք:
3. «ՄՈԴՈՒԼ-ՍԱՆ» ՍՊԸ, լիցենզիայի համարը՝ 635 կառուցման ժամնակահատվածը՝ 24.01.2019 15.01.2022, Էլ. էներգ. արտադ. ժամանակահատված /ավարտ՝ 15.11.2040, կայանի անվանումը՝ Մասրիկ, հզորությունը՝ 3 000,0 կվտ, տարեկան արտադրանքը՝ 5,52 1 071,0 արևային էլեկտրակայան Գեղարքունիք , Մեծ Մասրիկ, Վարդենիս

Արդյունաբերական մասշտաբի «Մասրիկ 1» արևային կայանի կառուցման ֆինանսավորումը վերջերս ավարտվել է: Իսպանական «Fotowatio Renewable Ventures» ընկերությունը կայանի ծրագրի իրականացման համար աջակցություն է ստանալու Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկից (ՎԶԵԲ), Եվրամիությունից (ԵՄ) և

Համաշխարհային բանկի խմբի անդամ Միջազգային ֆինանսական կորպորացիայից (ՄՖԿ): 55 ՄՎտ հզորությամբ կայանի ծրագրի իրականացման համար տրամադրվելու է մինչև 38.4 մլն ԱՄՆ դոլարի ֆինանսավորում: Կայանի կառուցման նպատակով 2019թ.-ի մարտի 29-ին ՀՀ կառավարության որոշմամբ օտարվել է 32.6591 հա հողատարածք:

**Համայնքի վարչական տարածքում լքված պոչամբարների և հանքարդյունաբերական լցակույտերի առկայությունը՝**

Համայնքի Սոթք բնակավայրից շուրջ 2 կմ հեռավորության վրա է գտնվում ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտ (պոչամբար), որն առաջացել է 1955-1957թթ-ին Սոթքի ոսկու հանքավայրից արդյունահանված հանքաքարի տեխնոլոգիական հարստացման արդյունքում: Այստեղ էր գտնվում Սոթքի փորձարարական հարստացման արտադրամասը: Պոչամբարի տարողությունը՝ 3,2 հազ.խմ պինդ թափոններ: 2019թ. Շրջակա միջավայրի նախարարության կողմից պոչամբարի թափոնների և հողի հետազոտությունը ցույց է տվել, որ այնտեղ կուտակված են՝ Al, Si, S, Cl, K,Ca, Ti, V, Cr. Mn,Fe, Co, Ni, Cu, Zn, As, Rb, Sr, Y, Sb, W, Pb, Th էլեմենտներ և դրանց միացություններ: Պոչամբարը տիրազուրկ է http://env.am/storage/files/hashvetvutyun-geraka-kayq_1.pdf

**2020թ-ի դրությամբ համայնքի բնապահպանական բնութագիրն՝ ըստ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի (http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekanq/tarekan/Annual-2020.pdf), պաշտոնական և ոչ պաշտոնական այլ աղբյուրների**

- **Համայնքի մթնոլորտային օդի որակը**

  «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքում համայնքի փոշու արտանետումների վերաբերյալ տվյալները բացակայում են: Նույն աղբյուրը նշում է, որ «արտանետումների անշարժ աղբյուրների 2019 թվականի տվյալների համաձայն՝ փոշու արտանետումները բարձր են Գեղարքունիքի մարզում, որտեղ մոնիթորինգի դիտակայանների բացակայության պատճառով մթնոլորտում փոշու պարունակությունը չի որոշվում» միաժամանակ նծելով, որ «Գեոպրոմայնինգ գոլդ» ՍՊԸ-ի կողմից շահագործվող Սոթքի հանքը Գեղարքունիքի մարզի մթնոլորտային օդ փոշու խոշոր արտանետման աղբյուրն է:

- **Համայնքի տարածքով հոսող գետերի աղտոտվածության մակարդակը՝**

  Մասրիկ գետի ջրի որակը Վերին Շորժա գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով և ծարիրով: Սոթք գետի ջրի որակը Սոթք գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված նիտրատ իոնով, ալյումինով, վանադիումով, բարիումով և ծարիրով: Հանքարդյունաբերության գործունեության հետևանքով աղտոտված է նաև Սոթք գետը: Աղտոտված գետերից է Մասրիկը՝ իր Սոթք վտակով:

  Գեղարքունիք, Մասրիկ և Սոտք գետերի հատակի նստվածքը պարունակում է ծանր մետաղների մի ամբողջ փունջ, որի պրոֆիլն ամբողջովին արտացոլում է Սոտքի ոսկու հանքավայրում այդ մետաղների պարունակությունը https://www.ecolur.org/files/uploads/pdf/Court/publicenvironmentalcourtminingfinal.pdf :

- **Հողերի աղտոտվածության մակարդակը**

  **«Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի** պաշտոնական կայքում նախկին Գեղամասար համայնքի հողերի աղտոտվածության վերաբերյալ տվյալները բացակայում են: Բացի բուն հանքավայրից, Սոտք գյուղից 1047 հա հող ևս տրվել է «Գեոպրոմայնինգ Գոլդ» ընկերությանը Սոտքի հանքավայրի

շահագործման ծրագրի ենթակառուցվածքների զարգացման համար: Այս տարածքն օգտագործվում է նաև դատարկ ապարների և լցակույտերի տեղադրման համար, ինչը, բնականաբար, հանգեցնում է հողերի աղտոտվածության: «Մերձսևանյան օֆիոլիտային գոտու ապարների և հողի էկոերկրաքիմիական վիճակը» գիտական հոդվածը (Գեւորգյան Ռ. Գ., Մինասյան Գ.Ա., Գեւորգյան Մ. Ռ., «Вестник Отделения наук о Земле РАН» գիտատեղեկատվական ամսագիր, համար 27, 2009թ.) ամբողջությամբ հաստատում է այն փաստը, որ Սոտքի հանքավայրի շրջանում հողն աղտոտված է ծանր և տոքսիկ մետաղներով: «Սոտքի հանքավայրի բոլոր երեք հատվածներում աղտոտիչ տարրերի սպեկտրն ընդհանուր առմամբ նույնական է: Միևնույն ժամանակ, ՍԹԿ-ն գերազանցող տարրերն են՝ Cr, Ni, Pb, Cu, Zn: Հողերի աղտոտման գումարային ցուցանիշի համաձայն՝ բոլոր երեք տարածքները պատկանում են խիստ աղտոտվածների կատեգորիային»,- գրում են հեղինակները: Հայտնաբերված հիմնական աղտոտիչները՝ քրոմը, նիկելը, կապարը, պղինձը և ցինկը, տարրեր են, որոնք ունեն մուտագեն և օնկոգեն ազդեցություն, այսինքն՝ ունակ են առաջացնել հրեշածնություն և չարորակ հիվանդություններ: https://onznews.wdcb.ru/publications/asempg/geoecol-4.pdf

**Տվյալներ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի եկամուտների վերաբերյալ**

| Նախկին համայնքի անվանումը | Ընդհանուր Եկամուտները, հզ.դրամ | Սեփական Եկումուտներ, հզ.դրամ | Գույքահարկ, հզ.դրամ | Հողի հարկ, հզ.դրամ | ՊԲ-ից ֆինանսական հանահարթեցման սկզբունքով տրամադրվող դրոտացիաներ, ՊԲ համայնքի վարչական բյուջեին | Հողերի վարձավճարներ՝հզ. դրամ | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման մակարդակներից, հզ.դրամ | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ստացված |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վարդենիս(Ա Այրք, Վ. և Ն. Շորժա գյուղեր) | 815006,0 | 120693,5 | 54471,5 | 7857,5 | 367720,4 | 16567,5 | 0 | 0 |
| Գեղամասար (18 գյուղ) | 538952,0 | 192449,3 | 14331,6 | 55504,0 | 191502,4 | 110551,7 | 0 | 0 |
| Կարճաղբյուր | 98982,9 | 12630,4 | 6220,0 | 3695,6 | 58035,8 | 1246,8 | 0 | 0 |
| Լճավան | 17271,4 | 5893,5 | 2000,0 | 2404,0 | 11377,9 | 1059,5 | 0 | 0 |
| Ախպրաձոր | 25562,9 | 4257,4 | 300,0 | 1931,6 | 8005,5 | 1966,0 | 0 | 0 |
| Նորակերտ | 61875,5 | 14107,4 | 3000,0 | 6214,0 | 15368,1 | 0 | 0 | 0 |
| Վաննան | 10875,9 | 4456,0 | 660,0 | 2079,0 | 6419,9 | 1527,0 | 0 | 0 |
| Խաչաղբյուր | 59298,4 | 9413,3 | 3523,8 | 4067,3 | 25385,9 | 1333,0 | 0 | 0 |
| Լուսակունք | 62272,0 | 8960,3 | 4550,0 | 2200,0 | 36543,7 | 169,5 | 0 | 0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Մաքենիս | 16121,7 | 5657,6 | 1664,6 | 2174,5 | 10464,1 | 1068,0 | 0 | 0 |
| Գեղաքար | 7500,0 | 3442,1 | 320,0 | 513,9 | 4057,9 | 1958,2 | 0 | 0 |
| Մեծ Մասրիկ | 149858,0 | 36749,2 | 11976,9 | 15953,9 | 52424,7 | 4291,4 | 0 | 0 |
| Ակունք | 141916,8 | 13675,3 | 4314,0 | 5600,0 | 110593,1 | 2306,9 | 0 | 0 |
| Տորֆավան | 14423,5 | 1906,0 | 1080,0 | 576,0 | 11517,5 | 432,0 | 0 | 0 |
| Ծովակ | 116111,4 | 12960,1 | 6860,2 | 2629,3 | 67689,0 | 1675,3 | 0 | 0 |
| Ընդհամենը | 2136028,4 | 447251,4 | 115272,6 | 113400,0 | 977105,9 | 146152,8 | 0 | 0 |

**Տվյալներ Վարդենիս համայնքի 2021թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի վերաբերյալ**

| Նախկին համայնքի անվանումը | Ընդհանուր Եկամուտները, հզ.դրամ | Սեփական Եկումուտներ, հզ. դրամ | Գույքահարկ, հզ. դրամ | Հողի հարկ, հզ.դրամ | ՊԲ-ից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ, ՊԲ համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ նպատակային դոտացիաներ.հա. դրամ | Հողերի վարձավճարներ՝, հզ. դրամ | Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից | Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից. հզ.դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վարդենիս | 527830,8 | 119108,0 | 54471,5 | 8657,5 | 396618,3 | 18684,0 | 0 | 0 |
| Գեղամասար | 474329,6 | 190553,8 | 17841,0 | 50299,1 | 257566,1 | 110551,7 | 32209,4 | 0 |
| Կարճաղբյուր | 81286,6 | 14450,4 | 6420,0 | 3695,6 | 66836,2 | 1246,8 | | 0 |
| Լճավան | 17271,4 | 5893,5 | 2000,0 | 2424,0 | 11377,9 | 1059,5 | 0 | 0 |
| Ախպրաձոր | 12262,9 | 4257,4 | 300,0 | 1930,6 | 8005,5 | 1966,8 | 0 | 0 |
| Նորակերտ | 61875,5 | 14107,4 | 3000,0 | 6214,0 | 15368,1 | 0 | 32400,0 | 0 |
| Վաննան | 10875,9 | 4456,0 | 660,0 | 2079,0 | 6419,9 | 1527,0 | 0 | 0 |
| Խաչաղբյուր | 34799,2 | 8413,3 | 3523,0 | 4067,3 | 25385,9 | 1333,0 | 0 | 0 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Լուսակունք | 50754,0 | 8960,3 | 4550,3 | 2200,5 | 36543,7 | 169,5 | 5250,0 | 0 |
| Մաքենիս | 16121,7 | 5657,6 | 1664,8 | 2174,5 | 10464,1 | 1068,0 | 0 | 0 |
| Գեղաքար | 7500,0 | 3442,1 | 320,0 | 513,9 | 4057,9 | 1958,2 | 0 | 0 |
| Մեծ Մասրիկ | 89218,9 | 36794,2 | 11976,9 | 15953,9 | 52424,7 | 4291,4 | 0 | 0 |
| Ակունք | 124268,4 | 13675,3 | 4314,0 | 5600,0 | 110593,1 | 2306,3 | 0 | 0 |
| Տորֆավան | 14423,5 | 2906,0 | 1080,0 | 576,0 | 11517,5 | 432,0 | 0 | 0 |
| Ծովակ | 81879,3 | 14190,3 | 6860,2 | 2629,3 | 67689,0 | 1675,3 | 0 | 0 |
| Ընդհամենը | 1604697,7 | 446865,6 | 118981,7 | 109008,2 | 1080867,9 | 147307,5 | 69859,4 | 0 |

Նախկին Գեղամասարի համայնքային բյուջեի 2021 թվականի ծախսային մասով շրջակա միջավայրի պահպանության համար նախատեսված է ընդամենը 9190,4 հազ. դրամ, այն էլ ամբողջովին ուղղվելու է աղբահանության կազմակերպմանը:

**Խոշորացված Վարդենիս համայնքի կազմում ընդգրկված նախկին համայնքների 2020 թվականին պետական համաֆինասավորմանը իրականացված սուբվենցիոն ծրագրերն են՝**

| | Ծրագրի անվանումը | Միջոցառման ոլորտը | Ծրագրի ընդհանուր արժեքը , դրամ | Պետական սուբսիդավորման չափը, դրամ |
|---|---|---|---|---|
| 1. | Վարդենիս համայնքի Այրք վարչական ջրագծի արտաքին ցանցի կառուցում | Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում | 45 849 000 | 33 946 500 |
| 2. | Գեղամասար համայնքի 12 բնակավայրերում խմելու ջրի ջրագծերի ներքին և/կամ արտաքին ցանցերի կառուցում կամ վերակառուցում | Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում | 240 185 710 | 171 276 217 |
| 3. | Գեղամասար համայնքի Փոքր Մասրիկ գյուղի 1 խորքային հորի և Տրետուք գյուղի ոռոգման ցանցի վերանորոգում | ոռոգման համակարգի կառուցում/նորոգում | 27 326 067 | 19 212 247 |
| 4. | Գեղամասար համայնքի Դարանակ, Կախակն, Սոթք, Շատվան գյուղերի կենտրոնական փողոցների լուսավորության ցանցի կառուցում և Փամբակ գյուղի լուսավորության ցանցի վերանորոգում | փողոցային լուսավորության համակարգի կառուցու/նորոգում | 44 896 200 | 29 913 780 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5. | Կարճաղբյուր համայնքի թիվ 3 և թիվ 15 փողոցների ասֆալտապատում | ասֆալտապատում | 45 688 000 | 28 316 800 |
| 6. | Լճավան համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգում | մանկապարտեզների կառուցում, վերակառուցում/նորոգում | 12 500 000 | 8 697 650 |
| 7. | Մաքենիս համայնքի հանդիսությունների սրահի սալիկապատում և գույքի ձեռքբերում | Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում | 4 890 000 | 2 004 300 |
| 8. | Մաքենիս համայնքի ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքներ | Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում | 12 408 020 | 9 157 414 |
| 9. | Ախպրաձոր համայնքի 1.2.3.4,5,6 փողոցների արտաքին լուսավորություն | փողոցային լուսավորության համակարգի կառուցու/նորոգում | 14 374 600 | 9 892 610 |
| 10. | Ծովակ համայնքի 1956 թվականին կառուցված խմելու ջրի ջրագծի վերանորոգում | Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում | 46 000 000 | 34 027 812 |
| 11. | Խաչաղբյուր համայնքի ոռոգման ցանցի վերանորոգում և կառուցում | ոռոգման համակարգի կառուցում/նորոգում | 34 992 840 | 25 879 588 |
| 12. | Լուսակունք համայնքի ոռոգման ջրագծի մասնակի հիմնանորոգում | ոռոգման համակարգի կառուցում/նորոգում | 8 870 000 | 5 743 772 |
| 13. | Լուսակունք համայնքի թիվ 1 գլխավոր փողոցի գիշերային լուսավորության անցկացում | փողոցային լուսավորության համակարգի կառուցու/նորոգում | 8 273 495 | 5 700 169 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14. | Նորակերտ համայնքի մանկապարտեզի տանիքի վերանորոգում | մանկապարտեզների կառուցում, վերակառուցում/նորոգում | 10 381 000 | 7 452 300 |
| 15. | Նորակերտ համայնքի խմելու ջրագծի 4-րդ փողոցի ներքին ցանցի հիմնանորոգում + | Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում | 19 998 000 | 15 702 176 |
| 16. | Մեծ Մասրիկ համայնքի երկրորդական թվով 7 փողոցների 5.5 կմ երկարությամբ արտաքին լուսավորության ծրագրի իրականացում | փողոցային լուսավորության համակարգի կառուցու/նորոգում | 15 912 000 | 11 181 934 |
| 17. | Մեծ Մասրիկ համայնքի մշակույթի տան կառուցում 2-րդ փուլ | Հասարակական շենքերի (մշակոիյթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում | Տվյալները բացակայում են | 49 500 000 |
| 18. | Ակունք համայնքի Բարեկամություն /1480մ./ և Շահումյան /120մ./ փողոցների ասֆալտապատում | ասֆալտապատում | 11 973 000 | 7 579 154 |
| 19. | Ակունք համայնքի մշակույթի տան բակի պուրակի բարեկարգում | այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում | 12 150 000 | 5 773 500 |
| 20. | Ակունք համայնքի արարողությունների սրահի ներքին հարդարման կապիտալ վերանորոգում | Հասարակական շենքերի (մշակոիյթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում | 8 870 000 | 4 295 700 |
| | ԸՆԴՀԱՄԵՆԸ՝ 20 ԾՐԱԳԻՐ | | 625537932 | 485253623,0 |

ՀՀ վարչապետի 2019 թվականի մարտի 19-ի թիվ 278-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից 2021 թ. հավանության արժանացած Վարդենիս խոշորացված համայնքում ներառված սուբվենցիայի ծրագրային հայտերի ցանկ

| | Համայնք | Ծրագրի անվանումը | Ծրագրի ընդհանուր արժեքը, դրամ | Համայնքի մասնակցության չափը, դրամ | Պետական մասնակցայի ն բաժինը, դրամ | Այլ ներդնող, դրամ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ակունք | Ակունք համայնքի 16/1, 16/2, 16/3, 16/4 փողոցների, 9-րդ փողոցի 2-րդ, 3-րդ նրբանցքների գազաֆիկացում | 17067630,0 | 6827052,0 | 10240578,0 | 0 |
| 2. | Ակունք | Ակունք համայնքի 2020 թվականի պատերազնի ժամանակ զոհված զինվորների հուշահամալիրի կառուցում | 23100870,0 | 9960552,0 | 9240318,0 | 3900000,0 |
| 3. | Վարդենիս | Վարդենիս համայնքի Ռոմանի փողոցի ասֆալտապատում և կահավորում | 30576970,0 | 16817333,0 | 13759637,0 | |
| 4. | Վարդենիս | Վարդենիս համայնքի Խ. Ստեփանյան փողոցի ասֆալտապատում, միակողմանի մայթի կառուցում և կահավորում | 82178370,0 | 45198103,0 | 36980267,0 | |
| 5. | Վարդենիս | Վարդենիս համայնքի Վ. Համբարձումյան փողոցի միակողմանի (170 մ երկկողմանի ) մայթի կառուցում | 88196820,0 | 48508251,0 | 39688569,0 | |
| 6. | Գեղամասար | Գեղամասար համայնքի Սոթք գյուղի գազաֆիկացման ընդլայնում | 95369770,0 | 17147908,0 | 57221862,0 | 21000000,0 |
| 7. | Վարդենիս | Վարդենիս համայնքի փողոցային լուսավորության ցանցի և արևային ֆոտովոլտային վահանակների տեղադրում | 133480260,0 | 21518091,0 | 86762169,0 | 25200000,0 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 8. | Վարդենիս | Վարդենիս համայնքի 4 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգում | 88364680,0 | 48600574,0 | 39764106,0 | |
| 9. | Նորակերտ | Նորակերտ համայնքի խմելու ջրի ջրագծի 2000 մ հատվածի վերանորոգում | 32405160,0 | 9721548,0 | 22683612,0 | |
| 10. | Ակունք | Ակունք համայնքի մշակույթի տան տանիքին 40,05 կվտ դրվածքային հզորության արևային կայանի տեղադրում | 17119900,0 | 6847960,0 | 10271940,0 | |
| 11. | Ակունք | Ակունք համայնքի մշակույթի տան վերանորոգում | 17685656,0 | 9782110,0 | 7903546,0 | |
| 12. | Ակունք | Ակունք համայնքի Սարալանջ և Շահումյան փողոցների ասֆալտապատման և Բարեկամության փողոցի մի հատվածի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքներ | 30265366,0 | 18159219,0 | 12106147,0 | |
| 13. | Ակունք | Ակունք համայնքի Բարեկամության փողոցի ոռոգման և գոյություն ունեցող կոյուղու ցանցի վերակառուցում | 19765250,0 | 6917837,0 | 12847413,0 | |
| 14. | Լուսակունք | Լուսակունք համայնքի ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորության անցկացում | 10858170,0 | 4343268,0 | 6514902,0 | |
| 15. | Լուսակունք | Լուսակունք համայնքի կենտրոնական թիվ 1 փողոցի մասնակի ասֆալտապատում | 18968430,0 | 11381058,0 | 7587372,0 | |
| 16. | Լուսակունք | Լուսակունք համայնքի ներհամայնքային հեղեղատարի մասնակի հիմնանորոգում | 13643640,0 | 8186184,0 | 5457456,0 | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 17. | Գեղամասար | Գեղամասար համայնքի 10 գյուղերի փողոցների լուսավորության ցանցի կառուցում, 2 գյուցերի լուսավորության ցանցի կառուցում և վերանորոգում, 1 գյուղի լուսավորության ցանցի վերանորոգում | 69385910,0 | 27754364,0 | 41631546,0 | |
| 18. | Գեղամասար | Գեղամասար համայնքի 8 բնակավայրերում խմելու ջրի ջրագծերի ներքին և/կամ արտաքին ցանցերի կառուցում և վերակառուցում, ինչպես նաև Շատջրեք գյուղի ոռոգման ջրի ջրագծի կառուցում՝1110մ. | 140355070,0 | 15000000,0 | 96355070,0 | 29000000,0 |
| 19. | Ակունք | Ակունք համայնքի մանկապարտեզի շենքի մի հատվածի վերանորոգման աշխատանքներ | 12900180,0 | 5160072,0 | 7740108,0 | |
| 20. | Մաքենիս | Մաքենիս համայնքի խմելու ջրի ջրագծի հիմնանորոգում | 10890400,0 | 3811514,0 | 7078886,0 | |
| 21. | Խաչաղբյուր | Խաչաղբյուր համայնքի փողոցների լուսավորության ցանցի կառուցում | 12347170 | 5000000,0 | 7347170,0 | |
| 22. | Խաչաղբյուր | Խաչաղբյուր համայնքի ոռոգման ցանցի մասնականգնման և կառուցման աշխատանքներ | 41626380,0 | 14569230,0 | 27057150,0 | |
| 23. | Ծովակ | Ծովակ համայնքի 1-ին փողոցի ասֆալտապատում | 70360870,0 | 42216522,0 | 28144348,0 | |
| 24. | Լճավան | Լճավան համայնքի խմելու ջրագծի վերակառուցում և ջրամբարի վերանորոգում | 14501710,0 | 5075540,0 | 9426170,0 | |
| | | Ընդամենը՝ 24 ծրագիր | 1037441032,0 | 359996039,0 | 652318543,0 | 79100000,0 |

**«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքին համապատասխան ընկերությունների կողմից տրված հարկերի հաշվին իրագործվող** սուբվենցիոն ծրագրերի համար նախատեսվող գումարը 2015-2017թթ. համար կազմել է 12695,0 հազ. դրամ: Ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Արդյունահանող ճյուղերի նախաձեռնության շրջանակներում տրամադրած հաշվետվության՝ 2016-2019թթ. Գեղամասար համայնքին չեն տրամադրվել բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիաներ (https://www.eiti.am/hy/%D4%B2%D5%B6%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%BA%D5%A1%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D6%80%D5%A5%D6%80/),

Ինչը, հավանաբար, պայմանավորված է նրանով, որ համայնքապետարանը չի ներկայացրել համապատասխան ծրագիր:

Համայնքի տարածքում գործող ոչ-մետաղական հանքավայրերն ընդգրկված չեն եղել օրենքով սահմանված ընկերությունների ցանկում:

**Համայնքի վարչական տարածքում գործունեություն իրականացնող «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի ՇԱԹ29/189 հանքարդյունահանման պայմանագրով ազդակիր համայնքի/բնակավայրի նկատմամբ ստանձնած սոցիալ-տնտեսական օժանդակության մասին՝**

«Սոթք համայնքի նկատմամբ ստանձնած սոցիալ-տնտեսական պարտավորություններն են՝

1. Սոթք համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն՝ յուրաքանչյուր հինգ տարին՝ 5,0 մլն. դրամ
2. Սոթք համայնքի տարածքում գտնվող 5 աղբյուրների կապտաժների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն՝ յուրաքանչյուր 5 տարին՝ 4,0 մլն. դրամ
3. Սոթք համայնքի ջրամատակարարման աշխատանքներին մասնակցություն՝ յուրաքանչյուր հինգ տարին՝ 1,5 մլն. դրամ
4. Սոթք համայնքի գազամատակարարման աշխատանքներին մասնակցություն՝ յուրաքանչյուր հինգ տարին՝ 1,5 մլն. դրամ
5. Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքում տեխնիկայի և վառելիքի տրամադրում՝ յուրաքանչյուր տարի, ըստ անհրաժեշտության
6. Ազդակիր համայնքի 2-3 երիտասարդների ուսմանը ֆինանսական աջակցություն՝ 1,2 մլն. դրամ
7. Գյուղամիջյան, միջհամայնքային նշանակության ավտոճանապարհների վերանորոգման աշխատանքներին մասնակցություն՝ խճի տեխնիկայի տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**Համայնքի տարածքում ոչ մետաղական հանքավայրեր շահագործող կազմակերպությունների ընդերքօգտագործման պայմանագրերով համայնքի նկատմամբ ստանձնած պարտավորությունների մասին՝**

1. «Գեգամետ պլյուս» ՓԲԸ, Պ-159 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական աջակցության դրույթներ չեն նախատեսված:

2, «Կապավոր» ՍՊԸ, Պ-207 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական աջակցության դրույթներ չեն նախատեսված:

3. «Ագրոսպասարկում» ԱՄ-ի Վարդենիսի շրջանային միավորում ԲԲԸ,Պ-255 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական աջակցության դրույթներ չեն նախատեսված

4. «Վարդենիսի տորֆ» ԲԲԸ,, Պ-404 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական աջակցության դրույթներ չեն նախատեսված

5. «Գեգամետ պլյուս» ՓԲԸ, Պ-525 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի սոցիալ-տնտեսական աջակցության ցուցաբերման համար նախատեսված են՝ համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին ամեն տարի աջակցել 300,0 հզ, դրամով, մանկապարտեզի կարիքների համար ֆինանսական տարեկան 150,0 հզ. դրամի աջակցություն, գրենական պիտույքների տրամադրում՝ 100,0հզ, դրամի, համայնքային նշանակության ավտոճանապարհների վերանորոգման աշխատանքների համար աջակցել տեխնիկայի տրամադրման տեսքով;

6. «Վարդենիսի քարհանք վարչություն» ԲԲԸ, Պ-643 ընդերքօգտագործման պայմանագրով նախատեսված է համայնքի զարգացման սոցիալ տնտեսական ծրագրերին մասնակցություն, այդ թվում՝ համայնքի տրամադրության տակ գտնվող տեխնիկայի վերանորոգման աշխատանքներին մասնակցություն, սոցիալապես անապահով ընտանիքներին դեղորայքի տրամադրում՝ վճարելով համայնքի բյուջե՝ տարեկան 150,0 հզ. դրամ:

**Ազդակիր համայնքի վարչական տարածքում գործող բիզնեսների և նախկին Գեղամասար համայնքի միջև կնքված կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մասին**

«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի, «Վարդենիսի տորֆ» ԲԲԸ-ի, «Հ.Է.Կ.Շին» ՓԲԸ-ի, «Ագրոսպասարկում» ԱՄ-ի Վարդենիսի շրջանային միավորում ԲԲԸ-ի, «Կապավոր» ՍՊԸ-ի, «Գեգամետ պլյուս» ՓԲԸ-ի, ՓՀԷԿ-երի և համայնքի միջև ընկերությունների վարած սոցիալական քաղաքականությունից բխող գրավոր պայմանագրեր չեն կնքվել, սակայն «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ն պարբերաբար համայնքի տարածքում իրականացվող սոցիալական ծրագրերում ունենում է իր մասնակցությունը: Որոշակի սոցիալական պարտավորություններ ստանձնելու վերաբերյալ «Հ.Է.Կ.Շին» ՓԲԸ-ի տնօրինությունը Դարանակ բնակավայրի բնակիչներին նախկինում բանավոր կարգով հայտնել է իր պատրաստակամության մասին:

**«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի՝ ՀՀ ԱՃԹՆ 2018թ. և 2019թ. հաշվետվություններով //reports.eiti.am/hy/report/search/company-pdf/ ազդակիր համայնքին առնչվող ցուցանիշներն են՝**

**2018թ.**

Արդյունահանել է 1141600 տոննա հանքաքար, արտադրել 4602,155 կգ և արտահանել է 4518, 604 կգ ոսկի և արծաթ պարունակող Դորե ձուլակտորներ:

Ընկերության աշխատանքներում զբաղված 1336 հոգուց այդ թվականին 733 հոգին եղել են ներկայումս Վարդենիս համայնքի կազմի մեջ ընդգրկված 10 համայնքի բնակիչներ:

Հաշվետու տարում միասնական հաշվից և գանձապետական այլ հաշիվներից մարված (վճարված), ինչպես նաև մաքսային մարմնում վճարված (ներառյալ տույժերը և տուգանքները) ռոյալթիի մեծությունը կազմել է 2147483647 դրամ:

Բնօգտագործման հարկի չափը՝ 3241907 դրամ, բնապահպանական հարկի չափը՝ 3451417 դրամ:

Գեղամասարի համայնքապետարանին մուծել է 59515 դրամ գույքահարկ, 7525 դրամ հողի հարկ, վճարել է 68,0 մլն. դրամ գումար հողամասի վարձակալության դիմաց:

ՇԱԹ 29/189 հանքարդյունահանման պայմանագրում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունները չեն կատարվել:

Մասրիկ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման համար ցուցաբերվել է 1,5 մլն. դրամ գումարի դրամական օժանդակություն:

**2019 թվական**

Արդյունահանել է 2163 տոննա հանքաքար, արտադրել 4815, 679 կգ և արտահանել է 5417, 213կգ ոսկի և արծաթ պարունակող Դորե ձուլակտորներ:
Ընկերություն աշխատանքներում զբաղված 1558 հոգուց այդ թվականին 950 հոգին եղել են ներկայումս Վարդենիս համայնքի կազմի մեջ ընդգրկված 10 համայնքի բնակիչներ:
Հաշվետու տարում միասնական հաշվից և գանձապետական այլ հաշիվներից մարված (վճարված), ինչպես նաև մաքսային մարմնում վճարված (ներառյալ տույժերը և տուգանքները) ռոյալթիի մեծությունը կազմել 7546538896 դրամ:
Բնօգտագործման հարկի չափը՝ 3241907 դրամ, բնապահպանական հարկի չափը՝ 209510 դրամ:
Գեղամասարի համայնքապետարանին մուծել է 270000 դրամ գույքահարկ, 60000 դրամ հողի հարկ, հողամասի վարձակալության դիմաց վճարել է 68,0 մլն. դրամ:
ՇԱԹ 29/189 հանքարդյունահանման պայմանագրում համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորությունների համար Գեղամասարի համայնքապետարանին է փոխանցվել 4.8 մլն. դրամ գումար, որից՝ որից 1600000 դրամ - Սոթք համայնքի տարածքում գտնվող 5 աղբյուրների կապտաժների վերանորոգման համար, 600000.0 դրամ-Սոթքի համայնքի ջրամատակարման ցանցի վերանորոգման համար, 600000,0 դրամ-Սոթքի համայնքի գազամատակարումն իրականացնելու համար, 2000000,0 դրամ-Սոթքի համայնքում այլ անհրաժեշտ սոցիալ-տնտեսական ծրագրերի համար:
Սոթք բնակավարի միջնակարգ դպրոցի վերանորոգման համար կատարել է 2360000,0 դրամ և Մասրիկի դպրոցի համար 666667,0 դրամ ապրանքային արժեքով ոչ-ֆինանսական ներդրում:
Մասրիկ բնակավայրի մանկապարտեզի վերանորոգման համար ցուցաբերվել է 1,5 մլն. դրամ գումարի դրամական օժանդակություն:
Վարդենիսի թիվ 4 միջն դպրոցի ջեռուցման համակարգի վերանորոգման համար կատարել է 500000,0 դրամի ոչ-ֆինանսական աջակցություն, Մասրիկի դպրոցին նվիրել է 666667,0 դրամական արժեքով աթոռներ:
Համահայկական 7-րդ ամառային խաղերին Վարդենիսի քաղաքային համայնքի մասնակցությունն ապահովելու համար համայնքապետարանին նվիրաբերել է 1000000,0 դրամի նվիրատվություն:
**Ոչ-մետաղական հանքավայրեր** շահագործող «Հայկ Վարդանյան» ՍՊԸ-ի, «Գեգամետ պլյուս» ՓԲԸ-ի և «Վարդենիսի քարհանք վարչություն» ԲԲԸ-ի ընդերքօգտագործման պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարողականի վերաբերյալ տվյալների վերաբերյալ սկզբնաղբյուրներ չհայտնաբերվեց, այն կարող ենք ճշգրտել տեղում՝ նախատեսվող հարցազրույցների փուլում:

**Համայնքի Դարանակ բնակավայրում գործունեություն իրականացնող «Դարանակ» ՓՀԷԿ-ի և դրա գործունեության հետևանքով բնակավայրում ծագած խնդիրների մասին**

Դարանակ համայնքի ոռոգման և խմելու ջրի միակ աղբյուրը ձորակից հոսող Դարանակ գետն է, որը թափվում է Սևանա լիճ: 2015 թ-ին գետի վրա կառուցվել է «Դարանակ» փոքր ՀԷԿ-ը, ինչի հետևանքով մոտավորապես 6 կմ երկարություն ունեցող գետի հունը փակվել է՝ խախտելով բնապահպանական բոլոր անհրաժեշտ չափորոշիչները, խախտվել է համայնքի ոռոգման համակարգը: ՓՀԷԿ-ի շահագործման դադարեցման նպատակով բնակավայրի բնակիչները 2019թ. դիմել են անգամ ՀՀ վարչապետին https://www.ecolur.org/hy/news/sos/--/10919/: «Դարանակ» ՓՀԷԿ-ի տնօրենը պատրաստակամություն է հայտնել, որ ոռոգման սեզոնին, թեկուզ ի վնաս իրենց եկամուտների, ՓՀԷԿ-ը չեն աշխատացնի:

ՓՀԷԿ-ում 2020թ. իրականացրած ստուգման արդյունքում Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը պարզվել է, որ ՓՀԷԿ-ը ջրառն իրականացրել է առանց ջրաչափի: «Դարանակ» ՓՀԷԿ-ի տնօրեն Լաերտ Գևորգյանին տրվել է խախտումները վերացնելու մասին հանձնարարական, և նշանակվել է 200.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: https://www.ecolur.org/hy/news/water/12340/ :